ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՈՎ ԳՈՐԾԸ ՄԱՍԱՄԲ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան 22 հունիսի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի
Անդամակցությամբ՝ Հ. Դանիելյանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Թադեւոս Դերմենջյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Թադեւոս Դերմենջյանը 10.06.2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ եւ 165-րդ հոդվածների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

Տվյալ անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված է, որ սույն դիմումը մասամբ՝ նշված օրենսգրքի 1-7-րդ հոդվածների մասով, ակնհայտ անհիմն է, քանի որ դիմողն իրավաբանորեն չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ վիճարկվող դրույթների միջեւ անմիջական պատճառահետեւանքային կապի ուղղակի առկայությունը /ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշման 8-րդ եւ 9-րդ կետեր/:

Բացի դրանից, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմն արձանագրում է նաեւ, որ դիմողի կողմից փաստորեն անտեսված է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի պահանջն առ այն, որ դիմողի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով անհրաժեշտաբար պետք է կիրառված լինի որեւէ օրենքի դրույթ կամ դրույթներ: Ներկայացված եւ ուսումնասիրված դատական ակտերից անվերապահորեն հետեւում է, որ դիմողի նկատմամբ ընդհանուր իրավասության դատարանների կողմից ակնհայտորեն կիրառված չեն վերը հիշատակված օրենսգրքի 1-7-րդ հոդվածները, ինչպես նաեւ նույն օրենսգրքի 165-րդ հոդվածի 2-5-րդ մասերը /պարբերությունները/:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասի /պարբերության/ մասով սույն անհատական դիմումի քննությունը մերժելու՝ օրենքով սահմանված հիմքերը բացակայում են, քանի որ դիմողի կողմից պահպանվել են ՀՀ սահմանադրական դատարան դիմելու համար օրենքով սահմանված ընդունելիության բոլոր պայմանները:

Տեղին է մատնանշել, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ՀՀ սահմանադրական դատարան է ներկայացվել դիմում /մտից թիվ 1-169, 11.06.2010թ./, համաձայն որի՝ ի թիվս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի մի շարք այլ հոդվածների, վիճարկվում է նաեւ նշված օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-4-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու պարագան: Գործի դատաքննությունը նշանակված է 16.11.2010թ. /«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդված/:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ եւ 6-րդ կետերով, 69-րդ հոդվածի 1-ին եւ 7-րդ մասերով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

1. Քաղաքացի Թադեւոս Դերմենջյանի անհատական դիմումով գործը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասի /պարբերության/ մասով ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

3. Տվյալ անհատական դիմումով գործի քննության ընդունումը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ հոդվածների, ինչպես նաեւ 165-րդ հոդվածի 2-5-րդ մասերի մասով մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

22 հունիսի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/2-21